

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

ԺԴ.00.16 “Համաճարակաբանություն” մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Կարինե Սամվելի Քոչարյանի “Վարակի համաճարակաբանական հսկողության առանձնահատկություններն ու խնդիրները մանկական բազմապրոֆիլ ստացիոնարում” թեմայով ատենախոսության վերաբերյալ

Քսանմեկերորդ դարում էլ ավելի է կարևորվում վարակիչ հիվանդությունների դերը, որը պայմանավորված է նրանց տարածվածությամբ, բարձր մահաբերությամբ և առաջացրած սոցիալ-տնտեսական մեծ վնասով, նոր վարակների իր հայտ գալով, գլոբալիզացիայով և այլն: Այս համատեքստում մանկաբուժական ստացիոնարներում վարակի կանխարգելման խնդիրը, ինչպես ամենուր, այնպես էլ՝ Հայաստանում շարունակում է մնալ առողջապահության կարևորագույն գերխնդիրներից մեկը: Մանկաբուժական պրակտիկայում վարակիչ գործոնով պայմանավորված հիվանդությունները տարիներ ի վեր եղել և մնում են առաջատար: Հիվանդանոցային ոլորտում դրանց միանում են նաև այսպես կոչված «բժշկական միջամտությամբ պայմանավորված վարակները», որոնց նկատմամբ մանկական օրգանիզմը էլ ավելի խոցելի է:

Խնդիրն ավելի է բարդանում վերջին ժամանակաշրջանում հակաբիոտիկների լայն կիրառման հետևանքով դրանց նկատմամբ մանրէների կայունության ձևավորման առումով: Այս տեսանկյունից առավել մեծ համաճարակաբանական նշանակություն ունի մետիցիլին-կայուն *S. aureus*-ը: Հարկ է նշել, որ վերջին տարիներին նկատվում է մետիցիլին կայունության զգալի աճ ստաֆիլոկոկերի ինչպես հոսպիտալային, այնպես էլ արտահոսպիտալային շտամների շրջանում, որը կարող է դառնալ հանրային առողջապահության հրատապ խնդիրներից մեկը:

Այսօր, բժշկագիտության զարգացմանը զուգընթաց ավելացել են բժշկական միջամտությունների տեսակները, որոնք առաջին հայացքից հեշտացնում են բուժական գործընթացը, բայց պատճառ են դառնում բուժառուի մոտ վարակիչ գործոնով պայմանավորված վարակի առավել հեշտ փոխանցման, ինչպես օրինակ է արյան հունի կաթետր ասոցացված վարակի դեպքում:

Ելնելով վերը նշվածից, անառարկելի է գրախոսվող ատենախոսության արդիականությունը և կարևորությունը, որը նվիրված է մանկաբուժական հիվանդանոցում վարակի տարածման համաճարակաբանական առանձնահատկությունների պարզաբանմանը ու կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը:

Ելնելով հարցի անհրաժեշտությունից, Կ. Քոչարյանն իր առջև նպատակ է դրել բացահայտել մանկական բազմապրոֆիլ ստացիոնարում վարակի հսկողության արդի խնդիրները, դրանց առանձնահատկությունները, ինչի հիման վրա մշակել նոր մոտեցումներ, ուղղված ԲՄՊՎ-ի հակահամաճարակային և կանխարգելիչ միջոցառումների արդյունավետության բարձրացմանը:

Կատարված լայնածավալ հետազոտությունները չափազանց արդիական են և ունեն գիտական ու գործնական կարևոր նշանակություն առողջապահության համակարգում, մասնավորապես՝ Հայաստանի համար: Հայցորդի կողմից առաջ քաշված խնդիրները հնարավորություն են տվել հիմնավորել աշխատանքի նպատակը, և դա նրան միանգամայն հաջողվել է:

Ատենախոսությունը գրված է հայերեն լեզվով, շարադրված է 117 էջի վրա: Կազմված է ներածությունից, գրականության տեսությունից, նյութը և մեթոդները բաժնից, սեփական հետազոտությունների 4 գլուխներից, ամփոփումից, եզրահանգումներից, գործնական առաջարկություններից և օգտագործված գրականության ցանկից, որը ներառում է 174 անուն աշխատանք: Ատենախոսությունը հագեցած է 17 նկարով, 3 աղյուսակով և 2 հավելվածով:

Հետազոտվող հիմնահարցից ելնելով, աշխատանքի ներածությունում հայցորդը հիմնավորում է թեմայի արդիականությունը, նպատակը, հետազոտության խնդիրները, ստացված արդյունքների գիտական նորոյթը, գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները:

Ատենախոսության առաջին՝ գրականության տեսության չորս ենթագլուխներում հեղինակը, ելնելով աշխատանքի նպատակից և խնդիրներից, մանրամասն ներկայացնում է առկա գիտական տեղեկությունները, մասնավորապես, վարակը երեխաների շրջանում, ներհիվանդանոցային վարակի համաճարակաբանական առանձնահատկությունները մանկաբուժական ստացիոնարում, հիվանդանոցում շրջանառող մանրէների տարածվածությունը և դրանց զգայունությունը հակամանրէային միջոցների նկատմամբ, ձեռքերի և ներանոթային կաթետերների դերը վարակի փոխանցման գործում, որտեղ զգացվում է հայցորդի վերլուծական մոտեցումը բերված տվյալների վերաբերյալ:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ սեփական հետազոտությունները, նվիրված է հետազոտության նյութին և մեթոդներին ու կատարված հետազոտություններին: Հայցորդի կողմից օգտագործվել են մանրէաբանական, գենետիկ, վիճակագրական ժամանակակից մեթոդներ:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում հայցորդի կողմից ստացված տվյալները, որոնք արտացոլում են վարակիչ գործոնով պայմանավորված հիվանդությունների մասնաբաժինը մանկական հիվանդացության ընդհանուր կառուցվածքում, դրանց պատճառագիտական և տարիքային կառուցվածը ևս պարզաբանվել են եռամյա կտրվածքով՝ 2013-2015թթ. դինամիկայում (երրորդ գլուխ):

Աշխատանքի չորրորդ գլխում հեղինակն անդրադարձել է մանկական ստացիոնարի շրջակա միջավայրից և հիվանդներից անջատված մետիցիլլին կայուն ոսկեգույն ստաֆիլոկոկերի գենոմի ամբողջական ուսումնասիրությանը, ինչը թույլ է տվել պարզաբանել դրանց պատկանելիությունը համապատասխան կլոնալ

համալիրներին և հետևություն անել ծագման վերաբերյալ: Գենոմի ամբողջական սեկվենավորման արդյունքում արձանագրվել են MRSA CC8 դոմինանտ կլոնի շրջանառությունը և հայկական տարբերակի առանձնահատկությունները:

Ատենախոսության հինգերորդ գլխում հեղինակի կողմից իրականացվել է բուժաշխատողների ձեռքերի միկրոֆլորայի ուսումնասիրությանն ուղղված 4953 մանրէաբանական հետազոտության և տարբերակված միկրոֆլորայի արդյունքների վերլուծություն: Բժշկական կենտրոնում հեղինակի ակտիվ մասնակցությամբ ներդրվել է ձեռքերի հիգիենայի ԱՀԿ-ի կողմից առաջարկված բազմաբաղադրիչ ծրագիրը և գնահատվել է վերջինիս արդյունավետությունը վարակի հսկողության ասպարեզում:

Հետազոտվել է նաև հիվանդների 63 ներերակային կաթետերների գաղութայնացումն ախտածին և պայմանական-ախտածին միկրոֆլորայով, միևնույն ժամանակ իրականացվել է արյան հունի վարակի կասկածով հիվանդների արյան նմուշառում և մանրէաբանական հետազոտություն /գլուխ 6/, ինչը թույլ է տվել պարզաբանել նշված ներանոթային սարքերի դերը վարակի փոխանցման գործում:

«Ամփոփում» գլխում հայցորդը բավականին մանրամասն անդրադառնում է իրականացված հետազոտություններին և ստացված արդյունքներին:

Ստացված տվյալները տրամաբանորեն ամփոփված են եզրահանգումներում, որոնք ամբողջովին արտահայտում են հետազոտվող հիմնահարցի էությունը և համապատասխանում են առաջադրված նպատակին և խնդիրներին:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված հոդվածներն արտացոլում են աշխատանքի հիմնական դրույթները:

Գրախոսվեղ աշխատանքի գիտական նորոյթը կայանում է նրանում, որ առաջին անգամ ՀՀ-ում իրականացվել է մանկական բազմապրոֆիլ հիվանդանոցի ընդհանուր հիվանդացության կառուցվածքում վարակիչ գործոնով պայմանավորված հիվանդությունների համաճարակաբանական վերլուծություն, ուսումնասիրվել են

հիվանդանոցի բաժանմունքներից և հիվանդներից անջատված մետիցիլին կայուն ոսկեգույն ստաֆիլոկոկերի գենետիկ առանձնահատկությունները, իրականացվել է անջատված շտամների գենոմի ամբողջական սեկվենավորում և ֆիլոգենետիկ ուսումնասիրություն: Հայտնաբերվել է միայն Հայաստանի համար յուրահատուկ կլոն, որը չնայած ունի ծագումնաբանական ընդհանրություն միջազգային հայտարարագրված շտամների հետ, բայց միանգամայն յուրահատուկ է:

Վերը բերված տվյալները հիմք են տալիս եզրակացնելու, որ Կ. Քոչարյանի կողմից կատարվել է ծավալուն, բազմակողմանի և մանրակրկիտ աշխատանք, հետազոտական հիմնահարցերի տրամաբանական հաջորդականությամբ:

Այս բոլորի հետ մեկտեղ ցանկանում եմ տալ որոշ պարզաբանման ենթակա հարցեր և ցանկություններ.

- Հեղինակի կողմից անց է կացվել միայն ոսկեգույն ստաֆիլոկոկի դեղակայուն տարբերակի մանրամասն գենետիկ հետազոտություն, մինչդեռ այսօր ակնհայտ է նաև գրամ-բացասականների հարաճուն դերը հատկապես ներհիվանդանոցային վարակի պատճառագիտությունում: Ցանկալի կլիներ հետազոտությունները շարունակել այս ուղղությամբ ևս:
- Խորհրդի կարգով կցանկանայի նշել, որ պետք է հետևողական լինել արված գործնական առաջարկությունների և ստանդարտ ընթացակարգերի ակտիվ ներդրմանը նաև այլ բժշկական հաստատություններում, ինչը թույլ կտար հստակեցնել վարակի կանխարգելման գործընթացը նաև այլ բուժհաստատություններում, հատկապես հոսպիտալային շտամների հայտնաբերման և տարբերակման տեսանկյունից:

Բերված առաջարկությունները չունեն սկզբունքային նշանակություն և չեն կարող նվազեցնել ատենախոսի կողմից կատարված ծավալուն և անհրաժեշտ աշխատանքի նշանակությունը:

Այսպիսով, Քոչարյանի կողմից կատարված ատենախոսությունը ավարտուն գիտական աշխատանք է՝ խիստ անհրաժեշտ գիտության և հանրապետության գործնական առողջապահության համար:

Ամփոփելով շարադրվածը, գտնում եմ, որ Կարինե Սամվելի Քոչարյանի «Վարակի համաճարակաբանական հսկողության առանձնահատկություններն ու խնդիրները մանկական բազմապրոֆիլ ստացիոնարում» թեմայով ատենախոսությունը իր արդիականությամբ, բովանդակությամբ, ծավալով, ստացված արդյունքներով և դրանցից բխող եզրահանգումներով, գիտական նորույթով և առաջարկությունների գիտագործնական նշանակությամբ լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈՀ-ի գիտական աստիճանների շնորհման 7-րդ կետի պահանջներին, իսկ հայցորդն արժանի է ԺԴ.00.16 «Համաճարակաբանություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ԵՊԲՀ մանրէաբանության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.  Կ.Ն. Մանուկյան

ԵՊԲՀ մանրէաբանության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Կ.Ն. Մանուկյանի ստորագրությունը վավերացնում եմ՝

ԵՊԲՀ գիտական
քարտուղար, բ.գ.դ., պրոֆեսոր

04.05.21թ.



Տ.Գ.Ավագյան